ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

1.1. Վճռաբեկ դատարանում վարչական պալատի ստեղծումը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրվեց վարչական դատարանը՝ որպես մասնագիտացված դատարան՝ այդպիսով ստեղծելով երաշխիքներ տվյալ ոլորտում դատական պաշտպանության իրավունքի իրացման արդյունավետությունը և լիարժեքությունը՝ արդարադատության այդ տեսակին բնորոշ առանձնահատկությունների հաշվառմամբ ապահովելու համար:

Այս առումով հարկ է նշել, որ Սահմանադրական դատարանը 25.11.2008 թվականի թիվ ՍԴՈ-780, 13.04.2010 թվականի թիվ ՍԴՈ-873 և 10.02.2015 թվականի թիվ ՍԴՈ-1190 որոշումներով արտահայտել է մի շարք սկզբունքային իրավական դիրքորոշումներ՝ Հայաստանի Հանրապետությունում վարչական արդարադատության արդյունավետ իրականացման և մասնագիտացված արդարադատության վերաբերյալ, որոնք հանգում են հետևյալին՝

1) մասնագիտացված արդարադատության, այդ թվում՝ վարչական արդարադատության, ինստիտուտի ներդրումը, ի թիվս այլոց, նպատակ է հետապնդում առաջին հերթին դատավորների մասնագիտացման միջոցով ապահովել տվյալ ոլորտում դատական պաշտպանության իրավունքի իրացման արդյունավետությունը և լիարժեքությունը՝ արդարադատության այդ տեսակին բնորոշ առանձնահատկությունների հաշվառմամբ: Մասնագիտացված դատարանների ստեղծումը բխում է հասարակական կյանքի առանձին ոլորտներում առաջացող հարաբերությունների կապակցությամբ պատշաճ արդարադատություն իրականացնելու պահանջից: Դատավորները մասնագիտանում են որոշակի

կատեգորիայի գործերով արդարադատության իրականացման մեջ, և այս դեպքում դատական սխալի հավանականությունն ավելի փոքր է: Հետևաբար, այդ ինստիտուտի բնականոն և լիարժեք կենսագործունեությունը պահանջում է, որպեսզի մասնագիտացման գործոնը հստակ արտահայտված լինի տվյալ տեսակի գործերի քննության իրավասությամբ օժտված բոլոր դատական ատյաններում.

2) վարչական մասնագիտացված արդարադատության ոլորտում անձի իրավունքների դատական պաշտպանության իրավունքի արդյունավետությունը պայմանավորված է ոչ միայն բողոքարկման միակ ատյանի՝ վճռաբեկ դատարանի մատչելիությամբ և արդյունավետությամբ, այլ այդ իրավունքի արդյունավետությունը պայմանավորող կարևոր հանգամանք է նաև վճռաբեկ դատարանում մասնագիտացման գործոնի լիարժեք դրսևորումը:

Պետք է նկատել, որ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի դատավորների վերաբերյալ դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակված տվյալների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ պալատի 11 դատավորներից 5-ը մինչև Վճռաբեկ դատարանում պաշտոնավարումն սկսելը կամ մասնագիտացված վարչական արդարադատության ներդնումը ունեցել են վարչական մասնագիտացում կամ վարչական ոլորտի, հանրային իրավահարաբերություններից բխող գործերի քննության, այդ թվում՝ տնտեսական դատարանում դատավորի փորձառություն (տնտեսական դատարանը Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հունիսի 17-ի քաղաքացիական դատավարության օրենսգրքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով իրավասու էր քննել հանրային իրավահարաբերություններից բխող գործեր): Բացի այդ, Վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկվելու համար պահանջվում է համապատասխան մասնագիտացում՝ քաղաքացիական, վարչական կամ քրեական, ինչը ենթադրում է, որ Վճռաբեկ դատարանում դատավոր է նշանակվում այս մասնագիտացումներից որևէ մեկն ունեցող դատավորը, սակայն Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատում նշանակված դատավորը պետք է ունենա 2 մասնագիտացում: Ըստ այդմ, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 30-րդ հոդվածում իրավական ֆիկցիայի միջոցով փորձ է

արվել հաղթահարել նշված իրավիճակը՝ սահմանելով, որ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի դատավորները համարվում են միաժամանակ քաղաքացիական և վարչական մասնագիտացումներ ունեցող:

Հարկ է նկատել նաև, որ Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդը իր (CCJE-GT) 15-րդ կարծիքի 44-րդ կետով նշել է, որ դատարանի ավելի բարձր ատյաններում դատավորների մասնագիտացումը դատավորների մեջ պետք է որոշակի բազմակողմանիության հնարավորություն տա, որպեսզի տարբեր տեսակի գործեր քննելիս հնարավոր լինի ճկունություն ցուցաբերել, ընդ որում՝ ճկունությունն անհրաժեշտ է, որպեսզի ավելի բարձր ատյանի դատարանները պատշաճ կատարեն իրենց օրինական և սահմանադրական պարտականությունները, այսինքն՝ երաշխավորեն օրենսդրության և կոնկրետ քննվող գործերի նկատմամբ հետևողականությունը[1]:

Ուշագրավ է, որ այլ երկրների օրենսդրության ուսումնասիրությունը ևս ցույց է տալիս, որ մի շարք երկրների դատական համակարգերում գործում են վարչական դատարանի ակտերը վերանայող մասնագիտացված ատյաններ: Ռուսաստանի Դաշնությունում, Վրաստանի Հանրապետությունում, Լատվիայի Հանրապետությունում վճռաբեկ դատարանների կազմում գործում են առանձին վարչական պալատներ, իսկ Գերմանիայի Հանրապետությունում, Ավստրիայի Հանրապետությունում, Շվեդիայի Թագավորությունում, Լիտվայի Հանրապետությունում և մի շարք այլ երկրներում գործում են վարչական գործերով առանձին վճռաբեկ (գերագույն) դատարաններ:

Հատկանշական է, որ Վճռաբեկ դատարանում վարչական պալատի ստեղծման անհրաժեշտությունն ամրագրված է դատական և իրավական բարեփոխումների 2019-2023թթ. ռազմավարությամբ:

Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանում ստացված, վարույթ ընդունված և չընդունված բողոքների վերաբերյալ վիճակագրությունը ցույց է տալիս, որ քաղաքացիական գործերով վճռաբեկ բողոքների թիվը շուրջ երկու անգամ գերազանցում է վարչական գործերով բողոքների թվին.

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

[1] Հասանելի է https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=090000168046a4b7 հղումով:

(2018-2020թթ. Վճռաբեկ դատարանում ստացված, վարույթ ընդունված և չընդունված բողոքների վերաբերյալ)

2018 թվականի ընթացքում

Գործերի տեսակ	Ներկայացված բողոքներ	Վարույթ ընդունված	Վարույթ չընդունված
Ընդհանուր	2280[2]	294 (13%)	1986 (87%)
Քաղաքացիական	1441	137 (10 %)	1304 (90%)
Վարչական	782	155 (20%)	627 (80%)

2019 թվականի ընթացքում

Գործերի տեսակ	Ներկայացված բողոքներ	Վարույթ ընդունված	Վարույթ չընդունված
Ընդհանուր	2769[3]	336 (12%)	2433 (88%)
Քաղաքացիական	1812	216 (12 %)	1596 (88%)
Վարչական	879	110 (13 %)	769 (87%)

2020 թվականի ընթացքում

Գործերի տեսակ	Ներկայացված բողոքներ	Վարույթ ընդունված	Վարույթ չընդունված
Ընդհանուր	2880[4]	311 (11%)	2569 (89%)
Քաղաքացիական	1818	228 (13 %)	1590 (87%)
Վարչական	1003	73 (7 %)	930 (93%)

2. Դատավորների թեկնածուների և առաջխաղացման ենթակա թեկնածուների ցուցակների համալրման ճկուն մեխանիզմների ներդնումը:

[2] այդ թվում՝ Վճռաբեկ դատարանի դատական ակտերի դեմ նոր հանգամանքներով բողոքները:
[3] այդ թվում՝ Վճռաբեկ դատարանի դատական ակտերի դեմ նոր հանգամանքներով բողոքները:
[4] այդ թվում՝ Վճռաբեկ դատարանի դատական ակտերի դեմ նոր հանգամանքներով բողոքները:

Ներկայումս Դատական օրենսգիրքը սահմանում է Դատավորների թեկնածուների և առաջխաղացման ենթակա թեկնածուների ցուցակների հերթական և արտահերթ համալրման եղանակներ, ընդ որում՝ հերթական համալրումը կապվում է դատարաններում կանխատեսվող թափուր տեղերի քանակի հաշվարկի հետ, իսկ արտահերթ համալրումը՝ հերթական համալրումից կամ դրա համար տեղերի հաշվարկից հետո առաջացած նոր թափուր տեղի առաջացման հետ: Այսինքն Բարձրագույն դատական խորհուրդը համալրում իրականացնելիս միևնույն է կաշկանդված է դատական համակարգում կանխատեսվող թափուր տեղերի քանակով համալրումներն իրականացնելու պայմանով: Նշված կարգավորումը, սակայն, խնդրահարույց կարող է լինել այն դեպքերում, երբ անկանխատեսելի հանգամանքներում դատավորների թափուր տեղեր առաջանան այն պայմաններում, երբ դեռ չի լրացել հերթական համալրումն իրականացնելու համար թափուր տեղերի հաշվարկման ժամկետը, իսկ արտահերթ համալրումն իրականացնելու պարագայում կարող է որոշակի ժամանակահատվածով առկախված մնալ առաջացած թափուր տեղերում դատավորների նշանակումը՝ մինչև արտահերթ համալրման իրականացումը:

Ամբողջ վերոշարադրյալը վկայում է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում և հարակից օրենքներում համապատասխան փոփոխություններ կատարելու անհրաժեշտության մասին:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերով (այսուհետ՝ Նախագծեր)՝

1) նախատեսվում են Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի վերացումով ստեղծել երկու ինքնուրույն, առանձին մասնագիտացումներ ունեցող քաղաքացիական և վարչական պալատներ.

2) կարգավորվում են Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատների կազմավորման և բնականոն գործունեության ապահովմանն հետ կապված հարցերը.

3) նախատեսվում է դատավորների թեկնածուների և առաջխաղացման ենթակա թեկնածուների ցուցակների համալրման ճկուն մեխանիզմներ՝ առանց ժամկետների և համալրման ենթակա քանակի սահմանափակման:

3. Նախագծերի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

Նախագծերը մշակվել են Արդարադատության նախարարության «Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոն» հիմնադրամի կողմից:

4. Ակնկալվող արդյունքը

Նախագծերի ընդունմամբ ակնկալվում է ապահովել Վճռաբեկ դատարանում վարչական գործերի քննության իրականացումը մասնագիտացված վարչական պալատի միջոցով, ինչպես նաև հնարավորություն ընձեռել Բարձրագույն դատական խորհրդին առավել ճկուն մեխանիզմներով ապահովել դատավորների թեկնածուների և առաջխաղացման ենթակա թեկնածուների ցուցակների համալրումը:

5. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ

Նախագծերի ընդունումը բխում է Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2013 թվականների ռազմավարությունից: